նոց տուրքերուն փոխարէնն է և հինգ հարիւր ոսկին ալ ճանապարհին փոխարէն։

16. Ձեռնարկութեան պայմանեալ ժամանակը տասը տարի է. այդ միջոցին ճանապարհին բոլոր թէ՛ շահը և թէ վնասը ձեռնարկողին վրայ է։

17. Ճանապարհին վերաբերեալ բոլոր գործերը, թէ՛ ձեռնարկողին դէմ ըլլան և թէ իրեն մարդոցը կառավարութեան ատեաններուն առջեւ պիտի տեսնուին ըստ օրինաց, այսինքն թէ ձեռնարկողը և թէ իւր պաշտօնեայները, այս մասին իբրեւ բարձր Դրան հպատակ պիտի ճանչցուին։

— Քաղաքիս կառավարիչ Վսեմ. Քեամիլ փաշայի հայրական աշխատութեանց արդիւնքը մեծ յուսով կ'ըսպասէ վայելել տեղւոյս հասարակութիւնը. և պիտի տեսնէ արդեօք նոյն օրերու պայծառ արեգակը իրեն վրայ ծագած. այս ճանապարհի կատարելագործութենէն զատ կը յուսայ նաեւ տեսնել Յոպպէի առջեւ նաւահանգիստ մը, որուն պէտքը շատ զգալի եղած է ամէն ճանապարհորդաց որն որ միշտ վտանգի սպառնալիք մը չըրած չանցուներ շատ անգամ անպարտները, ինչպէս մասնաւոր ազատեցաւ նոյն վտանգէն Աւստրիոյ Վեհ. Կայսրը Երուսաղէմէն վերադարձած ծովը իջնելու ժամանակ. և այս սպառնալիքը կարծեմ աւելի պիտի փութացնէ այս ամենապիտանի նաւահանգիստը, ուրկէ մինչեւ ցարդ անցնող բիւրաւոր ճանապարհորդք վտանգի մը երկիւղին ամէն սարսափանները շօշափելով անցած են։ Կարողութեան երկար ժամանակ կը մաղթենք Վսեմ. Քեամիլ փաշայի տեղւոյս կառավարչին, որ դիւրաւ կարենայ կատարել այն գործը ըստ բարձր հաճութեան Օգոստափառ Սուլթանին։

— Բորթ-Սայիտէն առնուած հեռագիրներ և լուրեր կը ծանուցանեն որ Սուէզի ջրանցքին բերանը միշտ աւազով կը լեցուի, այնպէս որ հետզհետէ պարպածնին տաւաոսները լեցուած եւ բարձրացած կը տեսնեն դարձեալ. և այս աւազակոյտն ալ կարմիր ծովու ալիքներէն կը մղուի եղեր։

## ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

(Շարունակութիւն և վերջ. տես թիւ 11).

32. Դուկիւ մարաջախտը Ալմանիացւոց Պօլոնիա կայսրէն զրկուած ըլլալով (այս թագաւորութիւնը բաժնուելէն յառաջ,) թագաւորին առջեւ ելլելու օրը, սրահի մի մէջ տարին ; իւր խոհեմութեամբ նստած մարդ մը տեսաւ, մեծամեծները բոլորտիքը շրջապատեալ ոտքի վրայ կայնած էին, զանիկայ Պօլոնիայի թագաւորը կարծելով սկսաւ ակնածական ողջոյնը տալ։ Այս մարդը Ռուսիոյ դեսպան Մաքիլպերժ կոմսն էր, որուն սխալը իմացընելու երբէք հոգ չտարաւ։ Դուկին իւր սխալմունքը հասկնալէն ետեւ սիրտը նեղացաւ, երեկոյին թագաւորին ու Մաքիլպերժին հետ խաղ խաղալով, սպաթիի թագաւոր ըսելով խաղաց անգամ մի։ Կը սխալիս ըսին անոր, ասիկա ծառայն (տղան) է։ Այս անգամս ալ սխալած ըլլալ ձեւացնելով իւր ձեռքը ճակտին զարնելով կանչեց՝ ո՜հ ներեցէք, այսօր երկրորդ անգամ է որ ծառայ մի թագաւոր կը կարծեմ։ Մաքիլպէրժը որչափ որ պատրաստաբան էր նէ՝ պրկունքները խածաւ ու ձայն չհանեց։

33. Գիւղացի մի իւր ամենագեղեցիկ ձին գիշեր մի ախոռէն գողցուց. այս մարդը տասն և հինգ մղոն հեռաւ

digitised by A.R.A.R.@

ձիու վաճառանոց մի գնաց, ուրիշ մի գնելու դիտաւորութեամբ, բայց շատ զարմացաւ ծախու դրուածներու մէջ իւր կենդանին ճանչնալով. շուտ մի սանձէն բռնելով կանչեց. "Այս ձին իմս է, երեք օր է որ ինձմէ գողցեր են»։ Կը խաբուիք սիրելի բարեկամ, ըսաւ անոր մեծ քաղաքավարութեամբ ձին վաճառողը, ես այս ձին ունենալս մէկ տարիէն աւելի է, քուկինը չէ. բայց անոր նման ուրիշ մ'ալ կըրնայ ըլլալ։ Գիւղացին իւր երկու ձեռքը շուտով մի ձիուն աչքերուն վրայ դրաւ պոռալով. "Շատ աղէկ, եթէ այսքան ժամանակէ 'ի վեր այս կենդանին քուկդ է, ըսէ ինծի ո՞ր աչքը կոյր է։ Ինքը ստոյգ ձին գողցողն էր, բայց մանրամասնաբար քննած չըլլալով ափշեցաւ մնաց. և որովհետեւ բան մի ըսելու ստիպուած էր, ըստ պատահման պատասխանեց թէ՝ ձախ աչքը կոյր է։ — Չգիտցար ըսաւ գիւղացին, ձիուն ձախ աչքը կոյր չէ. — Ա՛ն, կանչեց խաբեբան, խաբուած եմ, աջ աչքը չըտեսնար»։ Այն ատեն բացաւ գիւղացին ձիուն աչքերը ըսելով. "Հիմայ յայտնի եղաւ որ դուն խաբեբայ ստախօս մ'ես եղեր. տեսէք դուք որ ձին բնաւ կոյր չէ. ես այս գործը ըրի միայն գողութիւնը դուրս հանելու համար»։ Ամեն կայնած մարդիկները սկըսան ձեռք զարնել ու խնդալ. և կը պոռային, բռնեցէք բռնեցէք գողը, ու ձին ետ տալու պարտաւորեցէք։ Բանտարկեցին և ըստ արժանւոյն պատիժը կրեց.

34. Չորս խաբեբայ ձիաւորներ պանդոկի մը մէջ աղէկ ուտել խմելէն վերջը, ծախուց հաշիւը ուզեցին. մանչը հաշիւը բերաւ, առաջինը իւր ձեռքը գրպանը դնել կը ձեւացնէր. երկրորդը արգիլեց զայն ու ըսաւ՝ որ ինք պիտի հատուցանէր. երրորդը նոյն ձեւը կ'ընէր, վերջապէս չորրորդը մանչին ըսաւ. "Այս պարոններէն դրամ առնելու քեզի կ'արգիլեմ, որովհետեւ ես պիտի հատուցանեմ»։ Մէկերնին ալ չուզելով յաղթուիլ, մէջերնին միաբանելու միջոց մի կրնայ ըլլալ, անոնց մէջէն մէկը պոռաց. "Պարոն, հրաման տուր որ աչքերդ կապենք, ըսաւ պանդոկին մանչը ցուցընելով. մեզմէ ո՛ր մէկը բռնելու ըլլաս՝ այն պիտի վճարէ բոլոր ստակը»։ Այս առաջարկութիւնը ընդունելի եղաւ մանչուն աչքերը կապելով.

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

### ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

### ՄԱՏԹԷՈՍԻ ՈՒՌՀԱՅԵՑԻՈՅ

ՏՊԵԱԼ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

952 Թուականէն մինչեւ 1162 Թըւականը ազգային անցքերը կը պատմուի այս գրքի մէջ կրկին պատմագրաց ձեռամբ. սկիզբն մինչեւ 1136 Թուականը կը պատմաբանէ նոյն ինքն Մատթէոս վանական, և այնուհետեւ կը շարունակէ իւր աշակերտը Գրիգոր Երէց։

Հետաքրքիր ազգասիրաց համար կարդալու յարմար պատմութիւն մ'է, որ կը ներկայացնէ ազգի մը փառաւոր և թշուառ անցեալը, որով կրնան օգտիլ Ազգիս հարազատ որդիքը իւրեանց նախնեաց ձեռնարկութեանց յաջող և ձախող հետեւանքն իրենց 'ի խրատ առնլով։

Ազգային այս անտիպ հարազատ պատմութեանց մասերն փափաքելով Ս. Աթոռս փտելու և ցեցերու կեր ըլլալով կորսուելու վտանգէն ազատ պահել, երբեմն երբեմն 'ի լոյս ընծայե-

digitised by A.R.A.R.@